

Էջ 02	Յօդուած Յատուկ «Չարթօնք»-ին Սփիռքի Կոմիտէի Գիտնական Արձագանգները Արտախորհրդային Սփիռքում [1]	Էջ 03	Մշակութային Արձագանգ Մայր Աթոռ Ս. Էջմիածինի Մէջ Բացուած Ե Տ. Ներսէս Վրդ. Խալաթեանի Նկարներու Ցուցահանդէսը	Էջ 04	Մարզական Ռեալ Մատրիոնը Կետ Կորսուցուց
--------------	--	--------------	---	--------------	---

Լիբանանեան Լուրեր

Լիբանան Երեկ Շարունակեց Մալ Զինամորիկի Ազդեցութեան Տակ

Տեանկին Նախագահականն Յետոյ Ընտրական Նոր Օրէնքի՝ Համախոհութիւն

Յարաբերութիւնները Լիբանանեան Ուժերու Եւ Փողանգաւոր Կուսակցութեան միջեւ այնքան ալ փայլուն չեն երեւիր այս օրերուն:

Սամիր Շաաժաի վերջին նախաձեռնութիւնը՝ Առեւտրային Եւ Նախագահի թեկնածու, այնքան ալ հաշտ ձեռն չի դիտուիր իր դաշնակիցներէն: Մուսթաֆայի հոսանքէն բացի Փողանգաւորներն ալ կը թուին անակնկալի առջեւ եկած ըլլալ՝ նամանաւանդ, որ ըստ յայտարարութիւններու Շաաժա այս քայլին դիմած է՝ առանց խորհրդակցելու վերոյիշեալ իր երկու դաշնակիցներուն հետ:

Չկամութեան կամ հակասութեան իրավիճակը Մուսթաֆայի հոսանքին այնքան վնաս չի հասցներ սակայն, որքան Փողանգաւորներուն՝ եթէ նկատի ունենանք այն պարագան, որ Շաաժա-Աուն համաձայնութիւնը կ'անցնի նախագահական թեկնածութեան սահմանները՝ թակելու ընտրական համաձայնութեան մը դռները, որուն ուրուագիծերը կրնան աւելի յստականալ յաջորդող քննի մը օրերուն, երբ Լիբանանեան Ուժեր - Ազգային Ազատ Հոսանք ընտրական նոր օրէնքի միացեալ ծրագիր մը կրնայ ներկայացուիլ:

Շաաժա-Աուն ընտրական համաձայնութեան մը պարագային, որմէ դուրս կրնան մնալ Փողանգաւորները՝ եթէ անոնց նախագահ Սամիր Շաաժայէլ շարունակէ հակադրուիլ այս համաձայնութեան, Փողանգաւորները կրնան գրկուիլ նուազագոյն ընտրական յաջողութիւններէ բոլորակալ շրջաններուն մէջ, ուր Շաաժա-Աուն կրնան խլել բոլոր պոթոնները:

Արդեօք ա՛յս ծիրէն ներս եր Սամիր Շաաժայի երկուստեայն այցելութիւնը Ազատական կուսակցութեան ղեկավար Տորի Շամունին: Սակայն Փողանգաւոր-Ազատական ընտրական դաշնակցութիւն մը, ի՞նչ կրնայ փոխել բոլորակալ շրջանակին մէջ:

Կրնա՞յ ըլլալ, որ յաջորդող օրերուն Մուսթաֆայի-Փողանգաւոր շերտիւնին տեսնենք: Այդ պարագային սակայն Մուսթաֆայի պիտի չի թեկնածու...: Յաջորդող օրերը այս ուղղութեամբ յի ին անակնկալներով:

ՍԵՆԿ ԶՎԿՈՐԵԱՆ

Միջազգային Լուրեր

Թայուան, Հոնկ Զոնկ Եւ ԱՄՆի Արեւելեան Շրջանները Սաստիկ Զինամորիկի Ազդեցութեան Տակ

Թայուան կողմէն վրայ ցուրտ եղանակի պատճառով ցրտահարումէ գոհուած են աւելի քան 85 մեծեր: Շաբաթվերջին կողմին վրայ օդի ջերմաստիճանը նուազած է մինչեւ -4 աստիճան Մելիուս, որ վերջին 40 տարուան համար մրցանիշային ցուրտ ջերմաստիճան է: Նախօրէին Հոնկ Զոնկի մէջ ցուրտէն տուժած են 111 մեծեր, իսկ Կիրակի գիշեր քաղաքին մէջ օդի ջերմաստիճանը նուազած է մինչեւ -3.1 աստիճան, որ վերջին 60 տարուան մէջ ամենացած ցուցանիշն է: Ան այդ ԱՄՆի արեւելեան շրջաններուն մէջ են կը շարունակուին սաստիկ ցուրտն ու սառնամանիքը, որ անդամաւորած է մայրաքաղաք Ուաշինկթընը, Պալիմոնը, Նիւ Եորքը եւ երկիրի ամբողջ արեւելեան ափը, որ յայտնուած է ձիւնի հաստ շերտի տակ:



Լիբանան կը շարունակեց մալ Թայուան ձիւնամորիկի ազդեցութեան տակ, թէեւ Երկուշաբթի օրուան տեղումները եղած են սպասուածէն քիչ, սակայն ցուրտը համեմատաբար ծանր: Առաւօտեան ժամերէն ի վեր Պէյրութի եւ մօտակայ շրջաններուն մէջ անձրեւ չկար, Նոյնիսկ արեւը կը յայտնուէր երկար ժամանակի համար: Այսուհանդերձ վերջին օրերու ծանր ձիւնաթափի լույսին տակ, ծովեզերեայ շրջաններուն մէջ են կը տիրէ սաստիկ ցուրտ եւ ջերմաստիճանը չէ հասած 10ի սահմանը: Լեռնային շրջաններուն մէջ ձիւնի կուտակումը սկսաւ 900 մետրէն սկսեալ եւ շարք մը բնակարաններ մնացին ձիւնի մէջ պաշարուած: Անոնց բնակիչներուն օգնութեան հասան քաղաքացիական անվտանգութեան միատրները: Ներքին ապահովութեան ուժերու երթելէի բաժանմունքը յայտարարեց, որ լեռնային շարք մը ճամբաներ փակ կը մնան, մինչ ուրիշներ դարձած են դժուարանցանելի: Տեղեկութիւններուն համաձայն Տարի Պէյրութի միջազգային մայրուղին մասամբ բաց յայտարարուած է՝ մետաղեայ շղթաներով օժտուած ինքնաշարժներուն առջեւ, սակայն տակաւին փակ կը մնան բեռնակառքերուն դիմաց: Երեկ սաստիկացած ձիւնաթափի լույսին տակ, փակ յայտարարուեցան նաեւ Թարշիշի ճամբան եւ լեռնային բարձր գիւղերու ուղիները, իսկ Զֆարտըպիէն գիւղի բարձունքներուն վրայ ճամբաները մասամբ բաց էին ինքնաշարժներուն առջեւ:

Զինամորիկին հետեւանքով աշխատանքները դարձեան շարք մը նաւահանգիստներու, մասնաւորաբար ձկնորսներու փոքր նաւահանգիստներուն եւ Թրիփոլիի մէջ:

Հիմնուելով Կրթութեան Նախարարութեան պահանջքին վրայ դպրոցներն ալ փակ պահեցին ինչը դռները:

Պրորի Ընդունեց Երոպական Միութեան Յատուկ Ներկայացուցիչ Զրիսթիան Լազընը

Խորհրդարանի նախագահ Նեպի Պրորի Այն Թիւնի մէջ ընդունեց Պէյրութի մօտ Երոպական Միութեան յատուկ ներկայացուցիչ Զրիսթիան Լազընը, որուն հետ ընտանեկան երկիրի եւ շրջակի ընդհանուր զարգացումները: Պրորի նաեւ տեսակցեցաւ գաղթականներու հարցերու նախարար Ալիս Շապիւնիի հետ, ընտանեկան ընդհանուր իրադարձութիւնները եւ նախագահութեան վերաբերող հարցերը: Պրորի իր այցելուներուն առջեւ կարծիք յայտնեց, որ Փետրուար 8ի նախագահի ընտրութեան նիստը պիտի չտարբերի իր նախորդներէն, բացառելով այս հանգումին նախագահի ընտրութեան հարցով համաձայնութիւններու գոյացումը, հակառակ հարողակցութիւններու նախաձեռնութիւններու բազմացումին:

Պրորի Եւ Շաաժաի Միջեւ Հարցականներու Մեկնաբանութեան Գոյանակում

Յայտարարութիւններու եւ հակադարձութիւններու փոխանակում տեղի ունեցաւ Խորհրդարանի նախագահ Նեպի Պրորիի եւ Լիբանանեան Ուժեր կուսակցութեան պետ Սամիր Շաաժաի միջեւ: Պրորի նախ հարց տուաւ, թէ արդեօք Յրգպալլայէն կ'անկախուի ատրճանակ, հրաձիգ եւ հրթիռներ տեղադրել իր դաշնակիցներու գլխուն, որպէսզի անոնք ուղղուին Խորհրդարան եւ քուէարկէն ի նպաստ որոշ թեկնածուի մը: Լիբանանեան ուժեր կուսակցութեան նախագահը իր կարգին հարց տուաւ, որ եթէ Յրգպալլայէն կարելի չէ անկախել ճնշել իր դաշնակիցներուն վրայ, ապա ի՞նչ հիմքերով Աուն կը համարուի 8 Մարտի ուժերու թեկնածու: Շաաժաի հակադարձութեանն էտք Նոր յայտարարութիւն կատարեց խորհրդարանի նախագահը եւ նշեց, որ Աուն 8 Մարտի թեկնածուն է այն նոյն կետերով, որոնք հիման վրայ Շաաժա համարուած էր 14 Մարտի քաղաքական ուժերու թեկնածուն: Շաաժա իր կարգին հակադարձեց Պրորիի երկրորդ մեկնաբանութեան եւ յիշեցուց, որ ինք իր թեկնածութիւնը յետս կ'ընթացէ եր ի նպաստ երեսփոխան Միշէլ Աունի թեկնածութեան:

Շեմայէլ Տեակցեցաւ Շամունի Հետ Փողանգաւոր Կուսակցութեան Նախագահ Սամիր Շեմայէլ Եւ Տեսակցեցաւ Ազգային Ազատականներու Կուսակցութեան Նախագահ Տորի Շամունիի հետ, վերջնային Ստույգի կեդրոնատեղիին մէջ, ընտանեկան երկիրի ընդհանուր զարգացումները: Շեմայէլ եւ Շամունի նաեւ անդրադարձան նախագահական ընտրութեան թղթածրարին, վերջին հանգումներուն առջեւ կարծիք յայտնեց, որ Փետրուար 8ի նախագահի ընտրութեան նիստը պիտի չտարբերի իր նախորդներէն, բացառելով այս հանգումին նախագահի ընտրութեան հարցով համաձայնութիւններու գոյացումը, հակառակ հարողակցութիւններու նախաձեռնութիւններու բազմացումին:

Նախագահի Ընտրութեան Հարցը Դժուարին Հանգումէն Կ'անցնի

Գաղթականաց հարցերու նախարար Ալիս Շապիւնիի նշեց, որ Լիբանանի նոր նախագահի ընտրութեան թղթածրարը կ'անցնի դժուար եւ շփոթով յատկանշուած հանգումէն մը, երբ բոլոր կորսուած են եւ իրաքանչիւր խմբաւորում կետեր կը փորձէ նշանակել այլ խմբաւորումներու դէմ: Նախարարը հարց տուաւ, թէ արդեօք երեսփոխան Միշէլ Աուն կարողութիւն ունի՞ իր դաշնակիցները, մասնաւորաբար Յրգպալլայէն համոզելու՝ խորհրդարան ուղղելու եւ երկիրի նոր նախագահ ընտրելու: Նախարարը կոչ ուղղեց զարգացելու կառավարութեան աշխատանքները եւ կարծիք յայտնեց, որ զինուորական խորհուրդի նշանակումի ներդրմանը արժանի չէ այդ հարցով՝ Պաշտպանութեան նախարարի իրաւասութիւններու շուրջ բարձրացած աղմուկին:

Վարչապետ Սալամ Վերահաստատեց Տաւոսի Մէջ Յայտնած Իր Դիրքորոշումը

Վարչապետ Թամմա Սալամ յայտարարեց, որ ժետտայի խորհրդատուի ընթացքին արտաքին գործոց նախարար Շարան Պէտի, Լիբանանի դիրքորոշումին մասին յայտարարած էր առանց հաղորդակցելու վարչապետին հետ: Սալամ իր այցելուներուն առջեւ վերահաստատեց Տաւոսի մէջ Մեռական Արաբիոյ եւ Իրանի միջեւ հակամարտութեան մասին իր մեկնաբանութիւնները, ըստ որոնց Ռիատ իր գերիշխանութիւնն ու արաբական ազգային անվտանգութիւնը կը պահպանէ իրանեան միջամտութիւններէն:

Հայրենի Լուրեր

Հայաստանի Նախագահը Հեռաձայնային Հաղորդակցութիւն Ունեցած Ե Իրանի Նախագահին Հետ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած է Իրանի նախագահ Հասան Ռուհանիի հետ եւ ընտանեկան հայ-իրանեան բարեկամական յարաբերութիւններուն ու համագործակցութեան վերաբերող, ինչպէս նաեւ միջազգային եւ շրջանային օրակարգի շարք մը արդիական հարցեր: Նախագահները միտքեր փոխանակած են Իրանի ինտելեկտուալ ծրագիրին շուրջ, վերջին պայմանաւորութիւններու իրագործման պայմաններու մէջ՝ երկկողմանի կապերու հետագայ զարգացման նոր կարելիութիւններուն վերաբերեալ: Սարգսեան եւ Ռուհանի կարեւոր նկատած են՝ շարունակելու երկու երկիրներու միաց-



եալ ջանքերուն շնորհիւ արդիւնաւետ եւ անխափան համագործակցութիւնը, բարձր մակարդակով ձեռք բերուած պայմանաւորութիւններուն եւ հեռակարգային նոր նախաձեռնութիւններու իրագործման ուղղութեամբ՝ առաւելագոյն օգտագործելով գոյութիւն ունեցող ներուժը:

Ղարաբաղի Վերաբերեալ Զեկոյցներուն Ընտանեկան Հարաւոր Ե Տեղի Զուլենայ, Ետեւ Նախագահ

Սթրազպուրկի մէջ մեկնարկեց Եւրոպայի խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի ձմեռնային նստաշրջանը, որ պիտի տեւէ մինչեւ Յունուար 29:

Ըստ Panorama.am-ի՝ նստաշրջանի մեկնարկէն առաջ Ետեւ Նախագահ Անն Պրասեր, որուն լիագորութիւնները կ'արտօնին արդէն այսօր, հանդէս եկած է մամուլի ատուիտով եւ պատասխանած լրագրողներու հարցերուն:

Անն Պրասեր՝ ներկայացնելով Ետեւ Օրակարգը՝ նշած է նաեւ Ետեւ Օրակարգին ընդգրկուած երկու հակահայկական զեկոյցներու նախագիծերուն մասին՝ «Բնութիւններու աճը Լեռնային Ղարա-

բաղի եւ Ատրպէյճանի միւս գրաւելու տարածքներուն մէջ» եւ «Ատրպէյճանի սահմանամերձ շրջաններու բնակիչները միտումնաւոր գրկուած են ջուրէ», որոնց ընտանեկան ու քուէարկութիւնը նախատեսուած է Յունուար 26-ին:

Անն Պրասեր, սակայն, յայտնած է, որ կան բազմաթիւ առաջարկներ՝ վերոնշեալ բանաձեւերու նախագիծերուն վերաբերեալ ընտանեկան չիտականացնելու գծով:

«Վերջնական որոշումը, ի հարկէ, պետք է կայացնէ վեհաժողովը՝ իրականացնել ընտանեկան, թէ ոչ, կամ անկախ ետ ուղարկել յանձնաժողովը», - ըսած է Պրասեր:

«2ուրթնոց» Օղակայանը Ստացած Ե Ուժանկիւրի Կառավարման Համակարգի Ոլորտի ԻՍՕ 50001 Վկայական

Օրինաչափութեան Բրիտանական Հիմնարկը (BSI) Չուրթնոցի ուղեւորային համալիրին շնորհած է ԻՍՕ 50001 վկայական՝ Ուժանկիւրի կառավարման համակարգի ոլորտին մէջ, որ կ'ընդգծէ կառավարող ընկերութեան հաստատականութիւնը ուժանկիւրի արդիւնաւետութեան շարունակական բարելաւման հարցով:

Այս մասին կը տեղեկացնէ «Արմէնիա» Միջազգային Օղակայանային ՓԲԸ-էն: Չրափոր գործարկումով է 2015-ին եւ կը նախատեսէ ուժանկիւրի խումբի համար ապահովել այնպիսի ընդունելի համակարգ, որով ուժանկիւրի արտադրողականութիւնը պիտի ընդլուզուի չափանիշի կառավարման փորձին: Անկախ կը մանրամասնէ ուժանկիւրի օգտագործման, չափման եւ փաստաթղթագրման, ինչպէս նաեւ այնպիսի սարքերու, համակարգերու նախատեսում եւ ձեռքբերում, որոնք կը նպաստեն ուժանկիւրի արդիւնաւետութեան բարձրացման:

Կազմակերպութեան բոլոր մակարդակներու եւ գործառնութիւններու ամբողջ

Շրջանային Լուրեր

Տաւէ Փարիզի Մէջ Անցեալ Նոյեմբերին Կատարած Ահաբեկչութեանց Մասնակիցներուն Տեսանիւթը Կը Տարածէ

«Տաւէի ահաբեկչութիւններուն կողմէ տարածուած քարոզչական տեսահոլովակը, որ սպանալիքներ կը պարունակէ եւրոպացիներու հասցէին, միայն կը խայտառակէ ահաբեկչները», այսպէս հաստատեց Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանտ՝ մեկնաբանելով Իսլամական պետութեան տարածած տեսանիւթը, որ ներկայացուած է Փարիզի մէջ անցեալ Նոյեմբերի ահաբեկչութիւններու մասնակիցները վստահեցնելով, որ «Մեզի ոչինչ կը վախցնէ, ոչ մէկ սպանալիք Ֆրանսայի կրնայ ստիպել կասեցնելու, թէ ինչպէս

պետք է պայքար մղել ահաբեկչութեան դէմ», աւելցուց Օլանտ: Նշեց, Օլանտ այս յայտարարութիւնը կատարեց Նոր Տեղիին, ուր կը գտնուի այցելութեամբ: Նախագահ Տաւէ տեսանիւթ մը իրապարկած էր, որ քաղաքային տեսանիւթն այս 10 անձերու ինքնուրոյնը, որոնք մասնակցած էին Փարիզի մէջ 13 Նոյեմբեր 2015ին տեղի ունեցած ահաբեկչութիւններուն: Տեսանիւթին մէջ կային նաեւ մահապատիժ տեսարաններ եւ Մեծ Բրիտանիոյ վարչապետ Տէյլիտ Էմմերսոնի ուղղուած սպանալիքներ:

Յատուկ «Չարթօսք»ին Սփիւռքի Կոմիտէի Հիմնադրման Արձագանգները Արտախորհրդային Սփիւռքում ^[1]

ԳԵՈՐԳ ԵԱՉՆՃԵԱՆ

Սոյն գրութիւնը հատուած մըն է Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի մասին յօդուածագիրին՝ հեղինակման ընթացքի մէջ եղող լայնածաւալ ուսումնասիրութենէ:

«Խմբ.»

1964 թուականին Խորհրդային Յայաստանի հետ արտախորհրդային սփիւռքի կապը կատարում էր հիմնականում նամակագրութեան, նաալային հաղորդակցութեան, Իրանի պարագային՝ նաեւ Ձուլֆա-Նախիջեւան-Երեւան երկաթուղու միջոցով: Դեռեւս չէին գործում հեռատիպային կապն ու օդանավային ուղղակի հաղորդակցութիւնը: Արդի գերադրական է գերաբարգ հաղորդամիջոցների հետ համեմատած՝ կապի այս դանդաղ միջոցների գործածութեամբ է պայմանաւորուած այն համեմատաբար ուշ արձագանգը, որ ստացաւ Սփիւռքի կոմիտէի ստեղծումը արտախորհրդային գաղթածախներում: Նոյնիսկ առաջադիմական եւ հայրենասիրական/դեմոկրատական համարող սփիւռքեան շրջանակների արձագանգը որոշապէս ուշացաւ: այդ շրջանակները կարիքն ունեին Երաստեղծ կառույցի մասին յստեղծ տեղեկութիւնների, որոնք իրենց կարող էին հաղորդել 1964 թ. ամրանը Խորհրդային Յայաստան այցելող սփիւռքահայ զբոսաշրջիկները, այդ տարի ուսուցիչների վերապատրաստման համար հայրենական պետութիւնն հրահրող Գաղթածախները ամառային արձակուրդի համար իրենց ծննդավայր գաղթածախները վերադարձող, Երեւանի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում սովորող սփիւռքահայ ուսանողները եւ յատկապէս Խորհրդային Յայաստանից առաքուող պարբերական մամուլը:

Շատ տրամաբանական է, որ արձագանգները հիմնականում լինելու էին երեք տեսակի. ողջունող, զգուշատր եւ ... լռութիւն: Վերջին երկուքը բնորոշ էին հակախորհրդային դիրքորոշում ունեցող սփիւռքեան շրջանակներին, ու յատկապէս Հայ Յեղափոխական Ղաշակցութեան: Այդուհանդերձ ՀՀԿ տարբեր երկրների կառույցների խօսակց հանդիսացող պարբերականները՝ իրենք են ստեղծեցին միասնական դիրքորոշում Սփիւռքի կոմիտէի ստեղծման փաստի դիմաց: Արձագանգ ունեցող ընտրեցին յոյժ զգուշաւորութեամբ արձագանգը, ուրիշները, ինչպէս Պէյրուսի «Սփիւռք» լռութիւնը: Կարելի է ասել, որ հայրենասիրական եւ անկախ սփիւռքեան շրջանակների դիրքորոշումներն էլ տարբերեցին՝ ջերմ ողջունելուց զգուշաւոր

եւ պայմանաւորեալ ողջունելու միջեւ: Անհասկանալի է Սփիւռքի կոմիտէի հիմնադրման վերաբերեալ Մայր պառոռ ս. Էջմիածնի պաշտօնաթերթը «Էջմիածին» ամսագրի լռութիւնը, մասնաւորաբար եթէ նկատի ունենանք, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. ը մասնակցել էր Կոմիտէի հիմնադիր հաւաքին, այնտեղ ելոյթ ունեցել, ջերմօրէն ողջունել այդ կառույցի ստեղծումը եւ ընդգրկուել Սփիւռքի կոմիտէի ընդլայնուած կազմում: Նոյնիսկ սովորական լրատուութիւն տեղ չի գտել ամսագրի «Լուրեր Մայր Հայրենիքից» մշտական բաժնում[2]: Սա կարելի է բացատրել ամսագրի գրաբնութեան բարդ մեխանիզմի առկայութեամբ, ինչը ուշացուում էր համարների տպագրութիւնը[3]:

Արձագանգներու շրջանակներում պայմանաւորուած էր նաեւ՝ Սփիւռքի կոմիտէի հիմնադիր հաւաքից ընդամենը 20 օր ետք, Անաստաս Միկոյեանի ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նախագահ ընտրութեամբ: Հասկանալի է, որ այս իրադարձութիւնը մեծ ներդրում էր գտնելու սփիւռքահայ մամուլում՝ նրա դաշնակցական, դաշնակցական եւ չեզոքատուածներում հաստատապէս՝ որոշակի տուրերի տակ ձգելով Նոյնիսկ Սփիւռքի կոմիտէի նման կառույցի ստեղծման կարելու լուրը:

Սփիւռքահայ պարբերական մամուլում Սփիւռքի կոմիտէի հիմնադրման մեզ ծանօթ առաջին արձագանգը եղել է՝ այդ օրերին դեռեւս Ֆրեզնոյում լոյս տեսնող ՌԱԿ օրկան «Նոր օր» եռօրեայ թերթում: Նրա 1964 թ. Յուլիսի 10-ի համարի 2-րդ էջում, «Սփիւռքահայ Հայրենակիցներու Հետ Մշակութային Կապի Կոմիտէ Մը Ստեղծուեցաւ» վերնագրի տակ տպագրուել է լրատուութիւն, որի սկզբում տրուել են կոմիտէի հիմնական նպատակները՝ «բազմաթիւ երկրներու մէջ հաստատուած հայկական գաղութներու հետ շփումները ամրապնդել եւ գտնուել տեղեկ պահել Սովետական Հայաստանի կենսից զանազան մարզերում» եւ «արտասահման բնակող հայերու կենսից Հայաստանի հանրային կարծիքին ծանօթացնել»: Այս նպատակների իրագործման համար կազմակերպուելու են արուեստագետների, գիտնականների եւ մշակույթի գործիչների այցեր Սփիւռքի գաղութներ, երկրորդ, դասախօսութիւններ, համերգներ եւ նման միջոցառումներ: Ապա մեջբերում է հիմնադիր հաւաքում Վազգէն Ա.-ի ելոյթը: «Կոմիտէ կը բաղկանայ 67 անձնատուրութիւնների», յայտնում է «Նոր օրը» արեւմտեցում, որ կոմիտէի նախագահ է ընտրուել Մանկավարժական ինստիտուտի «տեսուչ» Վարդգէս Զամազասպեանը[4]:

Սփիւռքի կոմիտէի ստեղծմանը առա-

ջին արձագանգողներից եղան Պուենոս Այրեսում լոյս տեսնող «Սեւան» շաբաթաթերթն ու Փարիզի «Բիւրակն» կիսամեյնադարեւ, որոնք յատուկ խմբագրականներ նուիրեցին Կոմիտէի ծննդին: Կոմիտէի ստեղծման հակումներով «Սեւան»-ի 1964 թ. Յուլիսի 15-ի համարի «Նոր Երեւոյթ» եւ Անկիւնադարձ Հայրենիք-Սփիւռք Յարաբերութիւններու Մէջ» վերնագրուած խմբագրականում, Կոմիտէի գոյութիւնը անմիջականօրէն կապուած է սփիւռքահայութեան փրկարար ծրագրերի՝ հայոց Հայրենիքի գրասեւ տարածքների ազատագրութեան եւ հայրենադարձութեան հետ: Խմբագրականը նշում է, որ Կոմիտէի կազմակերպումով «Նոր աւիշ, եռանդ եւ հաւատք» է ներարկում սփիւռքահայութեան, «որպէսզի հայութիւնը ապրի, յարատեւէ հայրենադարձի բախտաւոր օրուն համար, իրմէն խլուած, յափշտակուած, բռնազրուած իրաւունքներու պահանջի օրուն համար»: Շաբաթաթերթը «ցնորք», «պոռոտախօսութիւն», «հակագիտական» եւ «մանկամտութիւն» է յայտարարում Սփիւռքի պահպանումը «առանց Մայր Հայրենիքի հետ կապ ունենալու»: Նման վարուելակերպը «պանդուխտ, հայրենակարօտ հայութիւնը դեպիծուում, ինքնասպանութիւն առաջնորդող» մտեցում է, համոզում է յայտնում «Սեւան»-ի խմբագրութիւնը[5]:

Անկախ ուղղութեան «Բիւրակն» ազգային, գրական պարբերագրի 1964 թ. 14-րդ, Յուլիսի 17-ի համարի «Ողջամտութեան Յարգանքներ» շատ բնութագրական վերնագրով խմբագրականում[6] շեշտում է այն միտքը, որ Կոմիտէի ստեղծումով, Հայրենիք-Սփիւռք մշակութային յարաբերութիւնների «պահպանումի ոգին եւ մեթոդը հիմնական յեղաշրջման ենթարկուած է (ճիշդը՝ են - Գ. Ե.)» ու արեւացում, որ այս նոր կազմակերպութեան երեւումով, «բոլորովին տարբեր նկարագիր եւ արժէք կը ստանայ հայրենաբնակ եւ օտարաբնակ հայերու փոխադարձ յարաբերութիւնը: Այս իրողութիւնը նոր քայլ մըն է հայ ժողովուրդի միութեան եւ ամբողջականութեան իրականացման ճամբուն վրայ»[7]:

Կոմիտէի ստեղծման ուղղութեան մէջ այլ պարբերականում՝ Ամերիկահայ մշակութային միութեան «Լրաբեր» երկօրեայ թերթում, Սփիւռքի կոմիտէի հիմնման աննշուած առաջին իրապարկմանը հանդիպում ենք բաւական ուշացած՝ 1964 թ. Դեկտեմբերի 1-ին: Թերթի այդ համարում լոյս տեսած մի իրապարկման մէջ ասում է, որ «սփիւռքահայութիւնը գտնեալնոր, ճերմակ ջարդին դիմադրելու իր կամքը պողպատող ուրիշ մէկ գործօս մըն է՝ մշակութային կապերու ամրապնդումն ու ընդլայնումը Մայր Հայրենիքին հետ»[8]:

մասին լրատուութիւնը ուշացաւ նոյնիսկ ... Կոմիտէի օրգանը դարձած «Սովետական Հայաստան» ամսագրում, որի 1964 թ., թիւ 8, օգոստոսի համարում նոր միայն լոյս տեսաւ Կոմիտէի հիմնադրութեան մասին պաշտօնական լրատուութիւնը. տե՛ս «Սովետական Հայաստան» ամսագրի, թիւ 8 (221), Բ. շաբաթը եւ էջ 2: Ամսագրի նախորդ՝ թիւ 7 (220) համարում հասցրել էին փոխել միայն նրա իրատարակչի անունը «Արտասահմանեան երկրների հետ բարեկամութեան եւ մշակութային կապերի հայկական ընկերութիւն»ից «Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէ»:

[4] Անստորագիր, «Սփիւռքահայ Հայրենակիցներու Հետ Մշակութային Կապի Կոմիտէ Մը Ստեղծուեցաւ», «Նոր օր» եռօրեայ, Ֆրեզնօ, 42-րդ տարի, թիւ 51, 10 Յուլիսի 1964 թ., էջ 2:

[5] «Սեւան» շաբաթաթերթ, Պուենոս Այրես, 1964, թիւ 151, 15 Յուլիսի:

[6] Շատ հաւանաբար, հեղինակը խմբագիր Լեւոն Չորմիսեանն է:

[7] «Բիւրակն» կիսամսեայինս, Փարիզ, 1964, թիւ 14, 17 Յուլիսի:

[8] «Լրաբեր» երկօրեայ թերթ, Նիւ Եորք, 1964, թիւ 55, 1 Դեկտեմբերի:

Շար. 1

Յատուկ «Չարթօսք»ին Առն Որո՛ւ Հօր Անունով Կոչուած Է

ԱՆՇԵՍ ԱՇՃԵԱՆ

Ի՞նչ կ'ուզէք դնել գաւակիդ անունը:
- Իմ հօրն անունով:
- Վայ... ինչո՞ւ ըստ հօրդ անունով երգիր, իմ հօրն անունով պիտի կոչուի:
- Ո՛հ, իմ հօրս...:
- Վարդան...:
- Իսկ ըստ հօրդ անունը:
- Վարդան...:
- Լաւ... ո՞ր է ինդիրը:
- Իմ հօրն անունն է ըսելով Վարդան պիտի կոչուի, ոչ թէր հօրը անունն է ըսելով...:

Ոմանք թերեւս կը յիշեն այս տողերը, որոնք առնուած են «Կատակը Մէկ Թիզ» թատերախմբին: Բայց զգուշացնեմ, անոնք որոնք կը յիշեն, ինծի պէս իրենց տարիքը կը բացայայտեն: Ինչեւէ...

Ինչո՞ւ յիշեցի այս տողերը... որովհետեւ Լիբանանի անձնուրաց եւ ծառայատր քաղաքագետները նախանձելով Չիատ Բահանիէն, սոյն թատերախաղընոր ձեւով կը ներկայացնեն լիբանանեան անկայուն եւ խախուտ թատերաբեմին վրայ: Սենարիոն լիբանանեան բեմի վրայ խաղող երկու գլխաւոր դերակատարներէն մին Անունը ներկայացուց՝ որպէս իր միակ ընդունելի թեկնածուն: Միւս գլխաւոր դերակատարներէն մին ալ զայն ներկայացուց՝ որպէս իր ընդունելի թեկնածուն: Այս անգամ առաջինը վրդովեցաւ եւ գժտուեցաւ, որովհետեւ Անունը որպէս իր թեկնածուն ընդունած էր: Հակառակ կողմին Անունը ընդունելով ինդիրը շրջուեցաւ, Անուն որպէս երկրորդ դերակատարի թեկնածուն պիտի ներկայանար, որ անընդունելի է:

Հարցը առկա պիտի մնայ, մինչեւ որ որոշուի, թէ Անուն որո՞ւ թեկնածուն է: Եւ կամ ըստ «Կատակը Մէկ Թիզ»-ի, որո՞ւ հօր անունով պիտի կոչուի:

Հալէպահայը Դեպի Ո՛ր

ՆՈՐԱ ՏԱՆԱԿԵՕՇԵԱՆ-ՄԱՆՍՈՒԲԵԱՆ



Սուրիոյ տալանալը իր ժողովուրդին, սուրիահայութեան եւ յատկապէս հալէպահայութեան համար 21-րդ դարասկզբի պատուհաբ դարձաւ:

Հարիւր տարի առաջ հայը սուրիական հողերու վրայ հաստատուած էր, արմատացած, ուռճացած եւ սերունդներ հասցուցած՝ փայլուն ու խաղաղ ապագայի մը հեռանկարով:

Սակայն ի՞նչ հեզանք, արդե՞օք հայու ճակատագիր. ահա այս արեւալի պայմանները կը ստիպեն հայուն, անգամ մը եւս դիմելու գաղթի, միշտ փայփայելով վերադառնալու յայտը:

Պատմութիւնը ինքզինք կը կրկնէ, թէ անոր կերտող բրուտը զայն կը ձեւաւորէ. շատ չէ ստորբերի, որովհետեւ արդիւնքը միեւնոյնն է, մարդը կը տառապի, կը գոհուի յանուն այլոց անձնական շահերուն: Անոնք շահերուն, որոնք գոհերու գանկերը աստիճանի տեղակ օգտագործելով կը բարձրանան... դէպի ո՞ր... դէպի իրենց ներակայական ձգտումները...:

Եւ միեւնոյն արդիւնքով՝ ինչպիսին էր առաջին աշխարհամարտին, հայը այսօր քաղաքակիրթ բնութեամբ մը կը լքէ իր իսկ շէնցուցած եւ ծաղկեցուցած «հայրենիք»ը ու կրկին կը բռնէ գաղթի ճամբան:

Իսկ գաղթի ճամբան ի հարկէ հետիոտն չէ, բայց նոյնքան ահաբեկ, անորոշ ու անողոք պայմաններու մէջ, որքան էր հարիւր տարիներ առաջ:

Հայը, յատկապէս հալէպահայը, որ շինած ու շէնցուցած էր իր գաղութը, կը հեռանալ իր ետին թողած ամբողջ գաղութի մը անցեալը, մշակոյթը, եկեղեցին, դպրոցը, միութիւնները...: Բայց դէպի ո՞ր. կրկին դէպի անորոշ, միզամած ապագայ, կը փնտռէ այն հողը, ուր պիտի կարենայ անգամ մը եւս հաստատուիլ ու արմատներ նետել, եւ... նորէն գաղթել...:

Ո՞ր է այն հողը, որուն հայը պիտի կառնի յաւիտեան...:

Տալօք, ոմանց համար Մայր Հայրենիքը Հայաստանը չէ, այլ արեւի «յառաջացած երկիրներ»: Ո՞ր «յառաջացած»ը. Այն, որ շէնցած է կամ կրկին պիտի շէն-

Նայ իր գաւակներուն աշխատանքի՞ն շնորհի:

Սակայն հայը ինչո՞ւ պէտք է ծաղկած հող փնտռէ ու անգամ մը եւս ծաղկեցնէ զայն. պարզապէս փաստելու, թէ հողը բերրի է կամ ո՞չ:

Ո՞ր է Մայր Հայրենիքը շէնցելու երազը, որով տոգորուած էին տարիներ առաջ, ցնո՞րք էր արդե՞օք...:

Իսկ ինչո՞ւ չմիանաք, չենք գտներ այս տարօրինակ հոգեբանութեան պատճառը, ապա դարմանեցէ զայն ու մեր ճիգերով մենք եւս ծաղկեցնենք մեր որդեկորոյս Մայր Հայրենիքը:

Թերեւս այսքան երազային կը գտնուէք, որպէս մտաւեռում, սակայն նպատակը եւ գաղափարը դատարկութենէն չեն ծնիր, այլ կարիքն են, առաջին լուծման լոյսի նշումները կ'արտացոլան երազանք հեռապատկերներէ:

Այս սկզբունքին հիման վրայ է, որ գիտութիւնը իր նուաճումները կ'արձանագրէ:

Մարդը փափաքեցաւ վեր թռչիլ, ստեղծեց թռչիլի համար սարքաւորումներ, որէ օր գաղթացուց գանոնք, իսկ այժմ հայն անշոքուտ ճամբորդութիւն անգամ հարց չէ իրեն համար:

Միեւնոյն սկզբունքով մօտեցումը կրնայ իրականացնել հայու նոր եւ գօրեալ Հայրենիք մը ստեղծելու եւ կերտելու կորուած տեղը, սակայն անհրաժեշտ է, որ կայանայ հայահաւաքի ծրագիրը. Սփիւռքը անգամ մը եւս սփռուելու կարիքը պէտք չէ ունենայ:

Բաւարար՞ է, որ իւրաքանչիւր սփիւռքահայ, գանազան երկիրներէ իր ստացած մշակոյթն ու վաստակը ձեռքին՝ մտնէ Մայր Հայրենիք, զայն ծաղկեցնելու նպատակով, հայ բազմութիւնով ու հայու աննկուն կամքով:

Եւ՛ բաւարար՞ է հեռուն դիտել Հայրենիքի խեղճութիւնը ու միայն երգել:

«Ա՛խ, Հայրենիք, Ե՞րբ պիտի տեսնեմ քեզի լաւ...»:

«Գանձասար»



Պատմութեան Մէջ Այսօր

ԱՄԱՐԱՆԴԱ ԳԵՈՐԳԻՈՒ

Մեր թուականէն 72 տարիներ առաջ՝ 1944-ին Պուրխարեստի մէջ մահացաւ ռումանացի գրող, հասարակական գործիչ, հայաստեւանարանագ Գերգիովն: Ան ծնած է 1857-ին Տրոպիշտի մէջ: Անոր գրական կեղծանունն էր Մայքա Ամարա:

Ան գրած է դաստիարակչական բնոյթի գործեր՝ «Հօր աղջիկը» (1912), «Սօր

Տղան» (1920), նաեւ յայտնի է իր «Բանաստեղծութիւններ» (1888), «Տառապանքի գրիչէն» (1888), «Նովելներ» (1890), «Կնոջ Իմաստութիւնը» (1896), «Անցեալի Սիմֆոնիներ» (1927) գործերով:

Մասնակցած է 1900 թուականին կայացած հարադրութեան համաշխարհային ժողովին: Ծանօթացած է հայ

ժողովուրդի անցեալին, այցելած է Կիւնեայի Միփթարեսներուն եւ հայկական այլ կեդրոններ:

Գերգիովնի «Լաց մի Ըլլար Հայաստան...» բանաստեղծութիւնը բողոք է՝ հայ ժողովուրդի ջարդարարներուն դէմ: Ան երկար տարիներ աշխատակցած է ռումաներէնով հրատարակուած «Արարատ» հայագիտական հանդէսին:

Մշակութային Արձագանգ

Մայր Աթոռ Ս. Էջմիածինի Մէջ Բացուած Է Տ. Ներսիսի Վրդ. Խալաթեանի Նկարներու Ցուցահանդէսը

Օրինութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Յայր Կաթողիկոսին, Յունուար 24-ին Գերբզեան հոգեւոր ճեմարանի մէջ տեղի ունեցած է Մայր Աթոռ Ս. Էջմիածինի միաբան, Թահանայից պատրաստութեան լայրակա պատասխանատու Յոգեւորի Տ. Ներսիս վարդապետ Խալաթեանի՝ գեղանկարի եւ կրօնփոքի անհատական ցուցահանդէսի բացման արարողութիւնը, որուն ծիրէն ներս ներկայացուած են 45 նկարներ: Այս մասին կը հաղորդէ Մայր Աթոռի տեղեկատուականը:



Արարողութեան ներկայ եղած են Մայր Աթոռի միաբանները, արուեստագետներ, Գերբզեան հոգեւոր ճեմարանի սաները եւ այլ հրաւիրեալներ:



Յուցահանդէսը պիտի գործէ մինչեւ Յունուար 28:

Իր հերթին Ներսիս վարդապետ շնորհակալութիւն յայտնած է Ամենայն Յայր Կաթողիկոսին՝ ընծեռած հնարարութեան համար, ապա անդրադառնալով իր ստեղծագործական կեանքին, ներկայացուցած է ցուցադրուած աշխատանքները:

Այնուհետեւ շարականներու կատարումներով հանդէս եկած է «Սաղմոսերգու» հոգեւոր երաժշտութեան արական երգչախումբը՝ խմբավարութեամբ Վահէ Բեկոյեանի:

Արեւմտահայերէնի Նուիրուած Համաժողով Օքսֆորտի Մէջ

Օքսֆորտի համալսարանի արեւելագիտութեան բաժանմունքի նախաձեռնութեամբ եւ «Գալուստ Կիւլպէնեան» հիմնարկի օժանդակութեամբ, կայացաւ «Արեւմտահայերէնը 21-րդ դարուն» եռօրեայ համաժողովը (Յունուար 21-23): Համաժողովին կը մասնակցէին արեւմտահայերէնի պահպանման եւ լեզուին ապագայի խնդիրներով մտահոգ գործիչներ, գրական, կրթական, հասարակական գործիչներ, նշանաւոր համալսարաններու հայագիտական ամպիոններու դասախօսներ, հրատարակիչներ եւ արեւմտահայերէն մամուլի ներկայացուցիչներ, կը հաղորդէ Գ.

Կիւլպէնեան հիմնարկի մամուլ գրասենեակը:

2010-ի Փետրուարին ժամանակակից հայերէնի երկու ճիւղերէն մէկը՝ արեւմտահայերէնը, ընդգրկուած էր ԵՐՈՒՆԵՍ-ԸՕ-ի «Աշխարհի վտանգուած լեզուներ» ու ցանկին մէջ՝ ստանալով «հաստատապէս վտանգուած» կարգավիճակ:


Համաժողովի կազմակերպիչները մտահոգութիւն յայտնելով այդ որոշումին առջիւ՝ քննարկած են արեւմտահայերէնը աւելի լայն ծրագրերով պահպանելու, ժամանակակից կայի միջոցներ օգտագործելու եւ Սփիւռքի նոր սերունդին մէջ արեւմտահայաստանի տարածելու:

Նոր հնարարութիւնները:

Համաժողովի համակազմակերպիչ, Օքսֆորտի համալսարանի դասախօս Յրաչ Զիլինկիրեան նշած է, որ այս առաջին անգամն է, որ Եւրոպայի նշանաւոր ու հնագոյն համալսարաններէն մէկուն մէջ կը կազմակերպուի արեւմտահայերէնի նուիրուած համաժողով մը, որուն բոլոր գեկոյցներն ու քննարկումները կ'ընթացան արեւմտահայերէնով:

Ըստ կազմակերպիչներուն արեւմտահայերէնի պահպանման նուիրուած համաժողովները շարունակական պիտի ըլլան:

Թուրքիոյ Մէջ Լոյս Տեսած Է Յովսէփ Յայրենիի «Վերին Եփրատի Աւազանի Հայերը 1915-ին Եւ Տերսիմը» Գիրքը



Նիի «Վերին Եփրատի աւազանի հայերը, 1915-ին Եւ Տերսիմը» աշխատութիւնը: Այդ մասին կը հաղորդէ Akunq.net-ը:

Երրորդ թեման կ'անդրադառնայ Տերսիմի աշխարհագրութեան եւ Յեղասպանութենէն ետք հոն մնացած փոքրաթիւ հայերու փրկուելու հարցով՝ Տերսիմի բնակչութեան ունեցած դերին:

Աղբիւրին համաձայն սոյն շատ կարեւոր ուսումնասիրութեան մէջ հեղինակը կը կեդրոնանայ երեք հիմնական թեմաներու վրայ: Անոնցմէ առաջինը կ'անդրադառնայ 20-րդ դարու սկիզբը Տերսիմի վիլայեթի սահմաններու հետ համընկնող՝ Վերին Եփրատի աւազանի տարածքին վրայ բնակող մեծաթիւ հայութեան դեմ Ապտուլ Համիտի իրականացուցած կոտորածներուն, ինչպէս նաեւ 1915-ին երիտօրոքներու իրագործած Յայր Եղասպանութեան թեմաներուն:

Գիրքին մէջ օգտագործուած աղբիւրներուն մեծ մասը կը կազմեն անձամբ հեղինակին կողմէ հաւաքուած՝ ակաւատներու հայերէն յուշերը, որոնց մեծ մասը առաջին անգամ ըլլալով կը հրատարակուի թրքերէն լեզուով:

Երկրորդ նիւթը կը վերաբերի այն փաստին, որ հայ քաղաքական կուսակցութիւնները չէին կանխատեսած Յեղասպանութիւնը, եւ կը քննուի անոր հետեւանքով որքէն կազմակերպուած ինքնապաշտպանութիւնի չցուցաբերելու հանգամանքները:

Բացի այդ հեղինակը այս աշխատութեան մէջ կը ներկայացնէ այն տարածքի բնակավայրերուն մէջ գիւղ առ գիւղ եւ որուն կողմէ իրականացած են կոտորածներն ու Յեղասպանութիւնը, եւ այստեղի որ աշիւթները պաշտպանած են հայոց: Յովսէփ Յայրենիին նշելով, որ Յայր Եղասպանութեան հետեւանքով հայ եւ քիւրտ ժողովուրդները կորսնցուցած են միասին փրկուելու հնարարութիւնը, 1938-ին Տերսիմի կոտորածը կը համարուի 1915-ի Յեղասպանութեան շարունակութիւնը:

Հայրենի Տնտեսութիւն

Qatar Airways-ը Մայիսին Կանոնաւոր Զուերթներ Պիտի Սկսի Դեպի Հայաստան



Qatar Airways (Թաթարի օդուղիներ) օդանաւային ընկերութիւնը յայտարարած է, որ կանոնաւոր չուերթներ պիտի սկսի դեպի Երեւան 2016-ի Մայիս 15-էն: Վկայակոչելով ընկերութեան հաղորդագրութիւնը PanArmenian.net-ը կը հաղորդէ, որ թռիչքները պիտի իրականանան Airbus A320-ով շաբաթական 4 անգամ:

Յիշեցնենք, որ ընկերութիւնը մտադրած էր չուերթներ իրականացնել դեպի Հայաստան 2015-ի Նոյեմբերին:

Թաթարի օդուղիները երեք տարի անընդմեջ ճանչցուած է Տարուան լա-

ւագոյն օդանաւային ընկերութիւն: Թաթարի օդուղիները Միջին Արեւելքի ամենամեծ օդանաւային ընկերութիւններէն մէկն է, ունի մեծ ցանց եւ թռիչքներ կ'իրականացնէ աւելի քան 140 ուղղութիւններով: Թաթարի օդուղիներու շարժակազմը համալրուած է աւելի քան 340 ժամանակակից օդանաւերով, որոնց մէջ Airbus A350, Airbus A380-800, Boeing 777-200, Boeing 777-300, Boeing 787-8 (Dreamliner) եւ այլն: Տնտեսական օդակայան յարմարաւետ տարանցիկ կէտ կրկայ ըլլալ Հայաստանէն ԱՄՆ, Միջին եւ Հեռավոր Արեւելք մեկնողներուն համար:

Սուրիահայ Օրագիր

Սուրիոյ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Համայնքապետ Վեր. Յարութիւն Սելիմեան Հանդիսաւոր Պաշտամունք Մատուցեց Հայ Ծերանոցի Նորաբաց Մատրան Մէջ

Կիրակի, 24 Յունուար 2016-ին, կէսօրուան ժամը 1:00-ին, Սուրիոյ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Համայնքապետ Վեր. Յարութիւն Սելիմեան, Ծերանոցի մատրան մէջ պաշտամունքին հանդիսապետեց եւ Աստուծոյ խօսքին պատգամը մատուց: Այս մասին կը յայտնէ Perio news:



Խորհուրեց գանոնք:

Պաշտամունքին ներկայ էին Հայ Ծերանոցի համակալութենէն եւ Տիւրքիոյ Օժանդակ Յանձնախումբի անդամներ, Ծերանոցի Տիւրքիոյ, Էմմանուէլ Եկեղեցւոյ Միացեալ ժողովի եւ Տիւրքիոյ յանձնախումբի անդամներ, ինչպէս նաեւ Հայ Աւետարանական Բեթլէ եւ Նահապետական Եկեղեցիներու Միացեալ ժողովներու ներկայացուցիչներ ու հոծ բազմութիւն մը հաւատացեալ ժողովուրդէն:

Շրջապայութենէն ետք հիւրերը ընդունուեցան Ծերանոցի փոքր ճաշարանը ճաշելու:

Պաշտամունքը առաջնորդեց պատուելի Սիմոն Տր Սահակեան՝ փառաբանութեան երգերով փոխասաց ընթերցումով եւ աղօթքով, դաշնամուրի ընկերակցութեամբ տիկ. Շողակաթ Աբարթեան-Սելիմեանի:

Ճաշի սկսելէ առաջ Սուրիոյ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Համայնքապետ Վեր. Յարութիւն Սելիմեան իր սրտի խօսքը արտասանեց, ուր իր գնահատանքի եւ քաջալերական խօսքերով բարձր գնահատեց Հայ Ծերանոցի համակալութեան եւ Տիւրքիոյ աշխատակցները, ինչպէս նաեւ ընդգծեց, որ Հայկաի մէջ երեք Համայնքապետներ՝ յատկապէս Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանի օրով, կը գործեն մէկ սիրտ եւ մէկ հոգի հասկացողութեամբ ծառայելու մեր ազգին: Ճաշի ընթացքին արտասանուեցան սիրտի խօսքեր, Հայ Ծերանոցի համակալութեան ատենաբանութիւնի տիկ. Աննա Տր Յակոբեանի եւ Ծերանոցի Տիւրքիոյ տիար Աւօ Գաթրճեանի կողմէ:

Աստուծոյ խօսքին պատգամը մատուցեց Վեր. Յարութիւն Սելիմեան՝ հիմնուած Յովհ. 5:1-9-րդ համարներուն վրայ:

Պաշտամունքը վերջ գտաւ հաւաքական Տերունական Աղօթքի երգեցողութեամբ եւ Վեր. Յարութիւն Սելիմեանի առաքելական օրհնութիւնով:

Պաշտամունքէն ետք ներկաները Վեր. Յարութիւն Սելիմեանի գլխաւորութեամբ շրջեցան սենեակ առ սենեակ: Վերապատուելի պատասպարեալներուն իրավիճակին ծանօթանալու, առանձին-առանձին զրոյցներ ունեցաւ եւ անոնց մասին տեղեկութիւններ ստացաւ, փոխանցեց իր օրհնութիւնը եւ բարեմաղթութիւններ, ինչպէս նաեւ միջոցառական ու քաջալերական խօսքերով:

Պետք է նշել, որ Հայ Աւետարանական Էմմանուէլ Եկեղեցւոյ Տիւրքիոյ Վարչութիւնը, հակառակ ամեն դժուարութեան ու տակաւին մէկ շաբաթ առաջ Էմմանուէլ Եկեղեցւոյ իրաւաւորութեան պատճառով կանաչացած կկիծող չսփոփած՝ տոկոս կամքով, ծառայաւոր ոգով Ծերանոց այցելած ու ճաշ պատրաստած էր, որ հրամցուեցաւ պատասպարեալներուն:

Գամիշլիի Պայթումներուն Կիրաւորուած Են Երկու Հայորդիներ



Երկու օր առաջ Գամիշլիի մէջ տեղի ունեցած պայթումներուն վիրաւորուած են երկու հայորդիներ՝ Միտր Պողոսեան եւ Յակոբ Միրզոյեան: Բարի ապաքինում կը մաղթենք բոլորին: Այս մասին կը հաղորդէ Հայկաի «Գանձասար» շաբաթաթերթը:

Յիշեցնենք, որ Գամիշլիի «Ուրբաթ» քրիստոնեական թաղամասին մէջ, Չանկոյի դիմաց (սոյն փողոցը ուր օրեր առաջ պայթում եղած էր), ահաբեկական երկու ուժգին պայթումներ ցնցած էին քաղաքը:

Յեղասպանութիւն - 100 Ամեակ

Իսրայելի Կողմէ Հայոց Յեղասպանութիւնը Չճանչնալը Կը Բիսի Զաղաքական Խնդիրներէ

Յունուար 27-ը Հոլոքոսթի գոհերու յիշատակի օրն է: Աշխարհի աւելի քան 30 երկիրներու մէջ, ներառեալ Հայաստանի, այդ օրը կը կազմակերպուին բազմաթիւ յիշատակի ձեռնարկներ:

Ըստ «Արմէնիփրես»-ի Հայաստանի հրեական համայնքի նախագահ Ռիմա Վարժապետեան յայտնած է, թէ Հայաստանի հրեական համայնքը Յունուար 27-ին, ՄԱԿ-ի Հայաստանի գրասենեակի հետ յիշատակի ձեռնարկ պիտի իրականացնէ Երեւանի մէջ:

«Ինչպէս նախորդ տարիներուն, այս անգամ ես պիտի հաւաքուիմք Հայ ժողովուրդի Յեղասպանութեան եւ Հոլոքոսթին նուիրուած յուշահամալիրին մօտ, ծաղիկներ պիտի խոնարհեմք՝ յարգելով միլիոնաւոր նահատակուած հրեաներու յիշատակը», ըսած է Ռիմա Վարժապետեան:

Անդրադառնալով Մերձավոր Արեւելքի եւ աշխարհի այլ հատուածներու մէջ տեղի ունեցող իրադարձութիւններուն՝

Ռիմա Վարժապետեան նշած է, որ այսօր գլուխ կը բարձրացնեն նացիական ուժերը, հաւանաբար մոռնալով 20-րդ դարու դաժան իրողութիւնները:

«Մենք ականատես եւ կ'ըլլանք ցաւալի զարգացումներու մերձավոր Արեւելքի եւ այլ երկիրներու մէջ: Եւ թէ մենք այսօր չենք «այլեւս երբեք», ուստի չի բացառուիր, որ կրկնուին Հոլոքոսթի տարիները», ընդգծած է Ռիմա Վարժապետեան:

անցեալը եւ ընեն ամեն ինչ՝ բացառելու համար նախկին սեւ էջերը», ըսած է Կարէն Յովհաննիսեան:

Հայաստանի մէջ հրեական համայնքի նախագահի տեղակալ Կարէն Յովհաննիսեանի խօսքով, 1915 թուականին տեղի ունեցած Հայոց Յեղասպանութենէն, իսկ յետագային նաեւ Հոլոքոսթէն՝ ցաւօք աշխարհը դասեր չէ քաղած: «Կը շարունակուին դաժան իրադարձութիւնները: Տեսանք, թէ ինչ եղաւ Աֆրիկեան որոշ երկիրներու մէջ, այսօր լարուած իրավիճակ է Եւրոպայի մէջ: Կը կարծեմ, որ այդ ամենը պետք է նպաստէ, որպէսզի սթափ մտածող մարդիկ վերյիշեն

Անդրադառնալով այն հարցին, թէ ինչու Իսրայելը մինչեւ հիմա չէ ճանչցած Հայոց Յեղասպանութիւնը, Կարէն Յովհաննիսեան նշած է, որ քաղաքականութեան ինտիմ կայ: «Իսրայելի մէջ իրականացուած հարցման համաձայն, հասարակութեան մեծ մասը կողմ է, որ Իսրայելը ճանչնայ Հայոց Յեղասպանութիւնը: Ցաւօք, շատ ժամանակ քաղաքական գործիչներու եւ հասարակութեան կարծիքները կը տարանջատուին: Շատ քաղաքական գործիչներ նախընտրական շրջանին կ'ըսեն, որ ընտրուելու պարագային պիտի ճանչնան Հայոց Յեղասպանութիւնը, բայց հագիւ ընտրուին այդ մասին կը մոռնան», ըսած է Կարէն Յովհաննիսեան: Հրեական համայնքի ներկայացուցիչները այդ գործընթացին մէջ կարեւոր համարած են ժողովրդական դիմաագիտութեան դերը:

Մարզական

Սպանիոյ Ախոյեանութիւն

Ռեալ Մատրիտը Կետ Կորսնցուց

2015-16 տարեշրջանի Սպանիոյ ֆութպոլի ախոյեանութեան դարձի երկրորդ՝ 21-րդ հանգրուանին երկրորդ դիրքը գրաւող «Պարսելնա»-ն իր դաշտէն դուրս յաղթեց «Մալախա»-ին եւ օգտուելով առաջատար «Աթլետիքո Մատրիտ»-ի հաւասարութենէն «Սելիլիա»-ի հետ, գրաւեց առաջատարի դիրքը: Իսկ «Ռեալ Մատրիտ»-ը իր դաշտէն դուրս հաւասարեցաւ միջակ դիրք գրաւող «Ռեալ Պէթիս»-ին հետ: Այս հանգրուանի մրցումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Աթլետիքո Մատրիտ - Սելիլիա 0-0
- Ռեալ Պէթիս - Ռեալ Մատրիտ 1-1
- Կոլտր.Քեխուսո 7, փոխ.Ֆ.Ռուիզ - Ք.Պենզեմա 71, փոխ.Ռոտրիկեզ, - Աթլետիք Պիլասո - Էյպար 5-2
- Տեխ.Լա Քորուսիա - Վալենսիա 1-1

Դասաւորում.

1-Պարսելնա 48 կետ 52-16, 2-Աթլետիքո Մ. 48 կետ 30-8, 3-Ռեալ Մատրիտ 44 կետ 58-20, Ռմբարկուներ.1-Լ.Սուարեզ (Պարսելնա) 18 կոլ, 2-Ք.Պենզեմա (Ռեալ Մատրիտ) 17 կոլ, 3-Նեյմար (Պարսելնա) 16 կոլ,

Անգլիոյ Ախոյեանութիւն

Լեյսթըր Սիթին Դարձեալ Առաջատար



Անգլիոյ ախոյեանութեան 23-րդ հանգրուանի մրցումներուն ամենակարեւորն էր Լոնտոնի տղրպին՝ «Արսենալ» - «Չելսի» մրցումը, որ աւարտեցաւ «Չելսի»-ի յաղթանակով: «Արսենալ»-ը նահանջեց երրորդ դիրքը: Առաջատարներէն միայն «Լեյսթըր Սիթի»-ն կրցաւ յաղթել եւ գրաւել առաջատարի դիրքը: Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Նորիչ Սիթի - Լիվըրպոլ 4-5
- Կոլտր.Տ.Մայքըսի 29, Ս.Նեյսմիթ 41, Ու.Հոլլահան 54, Ս.Պասնկ 90+2 - Ռ.Ֆիրմինիո 18, 63, Ճ.Յենտըրսըն 55, Ճ.Միլնըր 75, Ա.Լալանս 90+5,
- Մանչեսթըր Եունայթըտ - Սաութհեմփթըն 0-1, կոլ.Չ.Օսթին 87,
- Լեյսթըր Սիթի - Սթոք Սիթի 3-0
- Կոլտր.Տ.Տրիքոտըրը 42, Ճ.Վարտի 66, Լ.Իվոա 87,
- Ռեյսթ Ին Եունայթըտ - Մանչեսթըր Սիթի 2-2
- Կոլտր.Է.Վալենսիա 1, 56 - Ս.Ակուերո տուգ.9, 81
- Քրիսթըլ Փալաս - Թոթընհեմ Զոցփըր 1-3
- Կոլտր.Ճ.Վերթոնկէն սխալ.30 - Յ.Էյն 63, Տ.Ալի 64, Ն.Շաուի 90+5,
- Էվըրթըն - Սուանսի Սիթի 1-2
- Արսենալ - Չելսի 0-1, կոլ.Տիեկո Քոսթա 23, փոխ.Իվանովիչ, Դասաւորում.
- 1-Լեյսթըր Սիթի 47 կետ 42-26, 2-Մանչեսթըր Սիթի 44 կետ 45-23, 3-Արսենալ 44 կետ 37-22, 5-Մանչեսթըր Եուն. 37 կետ 28-21, Ռմբարկուներ.1-Ճ.Վարտի (Լեյսթըր Սիթի) 16 կոլ, 2-Ռ.Լուքաքու (Էվըրթըն) 15 կոլ, 3-Օ.Կիլալթ (Ուաթֆորտ) 14 կոլ,

Իտալիոյ Ախոյեանութիւն

Նափոլին Եւ Եուվենթիսը Յաղթական



2015-16 տարեշրջանի Իտալիոյ ֆութպոլի ախոյեանութեան դարձի երկրորդ՝ 21-րդ հանգրուանին, առաջատար «Նափոլի»-ն իր դաշտէն դուրս յաղթանակ տարաւ «Սամփտորիա»-ին վրայ: «Եուվենթիս»-ը իր դաշտին վրայ էն դուրս յաղթեց «Ուտինեզե»-ին

Տիպալայի երկու կողմով: Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Սամփտորիա - Նափոլի 2-4
- Կոլտր.Ք.Քորրեա 45, Էտեր 73 - Կ.Հիկուէն 9, Լ.Իսպիլիէ տուգ.18, Մ.Համշիք 60, Տ.Մերթենս 79,
- Եուվենթիս - Ռոմա 1-0, կոլ.Փ.Տիպալա 77, փոխ.Փ.Փոկպա,
- Ինթըր Միլան - Քարպի 1-1
- Կոլտր.Ռ.Փալասիո 39 - Ք.Լազարիա 90+2,
- Ֆիորենթինա - Թորինո 2-0, - Էմիլիոյ - Միլան 2-2

Դասաւորում.

1-Նափոլի 47 կետ 45-18, 2-Եուվենթիս 45 կետ 38-15, 3-Ֆիորենթինա 41 կետ 39-21 Ռմբարկուներ.1-Կ.Հիկուէն (Նափոլի) 21 կոլ, 2-Էտեր (Սամփտորիա) 12 կոլ, 3-Փ.Տիպալա (Եուվենթիս) 12 կոլ,

Լիբանանի Գ.Դասակարգի Ախոյեանութիւն

ՀՄՍ-ի Առաջին Յաղթանակը

Լիբանանի 2015-2016 տարեշրջանի ֆութպոլի երրորդ դասակարգի ախոյեանութեան Բ.խմբակի մրցումներու 6-րդ հազրուանին, «ՀՄՍ»-ը մրցեցաւ Թրիփոլի մէջ տեղւոյն «Ալ Շապպա»-ին դէմ եւ տարաւ առաջին յաղթանակը: Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Ալ Շապպա Թրիփ. - ՀՄՍ 0-2
- Կոլտր.Հապիպ Դանտուր 80, Համատ 86,
- Ալ Արապի Թրիփոլի - Շեքքա 1-1

- Ալի Սարպա - Նըժմէք Ալ Սահրա 3-1
- Հարֆ Ըրոտ - Իթթիհատ Հարըք Նաամէ 2-2

Բ.խմբակի դասաւորում.

1-Ալի Սարպա 14 կետ 11-4, 2-Շեքքա 9 կետ 8-5, 3-Ալ Արապի 7 կետ 7-8, 5-ՀՄՍ 6 կետ 8-8,

Այսօրուան Մրցումներու Յայտագիրը

Ստորեւ տեսնել այսօրուան մրցումներու յայտագիրը (փակագիծերու մէջ՝ խումբին դիրքը).

ԱՆԳԼԻՈՅ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ ԿԻՍՄԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ԴԱՐՁ

Ժամը 21:45 Լիվըրպոլ (7) - Սթոք Սիթի (9), երթ.1-0

ԻՏԱԼԻՈՅ ԲԱԺԱԿԻ ԿԻՍՄԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ԵՐՁ

Ժամը 22:00 Ալեսանտրիա (Գ.Դաս.) - Միլան (6),

ՖՐԱՆՍԱՅԻ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ ԿԻՍՄԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒՄՆ

Ժամը 22:00 Լիլ (14) - Պորտո (10)

ՓՈՐՏՈՂԱՆԻ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ 3-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆ

Ժամը 18:00 Նասիոնալ (15) - Օրիենթալ Լիզպոա (Բ.Դաս.),

Ժամը 20:30 Արուբա (9) - Սփորթինկ Լիզպոա (1),

Ժամը 20:30 Փաշու Տէ Ֆերերա (5) - Փորթիմոնեսէ (Բ.Դաս.),

Ժամը 22:30 Մորեյրենսէ (14) - Պենֆիլդա (2),

ՀՈԼԱՆՏԱՅԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆ

Ժամը 19:30 Վիլեմ Թիլվըրկ (14) - Կրոնիկկըն (9)

Ժամը 21:45 Այաքս Ամսթերտամ (1) - Հերաքլէս Ալմելո (4)

ԱՄԻՈՑ ՄԻՆԶԵՐ 23 ՏԱՐԵԱՆ ԱՆՈՅՏԱՆ.ԿԻՍՄԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒՄՆ

Ժամը 15:30 Ճարն - Իրաք

Ժամը 18:30 Զաթար - Հար.Քորէս

ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍԵՏԹՊՈՒՆ ՏՐՈՑ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 6-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆ

Ժամը 20:30 Հոնիս (5) - Պիպլոս (7), Միշէլ Մըր մարզ.

ԹԵՆԻՍԻ ԱՄՏՐԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՅ ՄՐՑԱՆԵՐԻ ԿԻՆԵՐՈՒ 1/4-ՐԴ ԱՄԱՐ.

Ժամը 08:00-Էս սկսեալ europa 1 կայանէն:

Պարբերակ

Լիբանանի Տղոց Ախոյեանութիւն

Հիքմէն Կրեց 3-րդ Պարտութիւնը

Լիբանանի պասթեթպոլի տղոց ախոյեանութեան 6-րդ հանգրուանի երկրորդ մրցումին, «Հիքմէն»-ն իր դաշտին վրայ ընդունեց «ՀՄՄ»-ը եւ կրեց իր 3-րդ պարտութիւնը 94-97 հաշիւով: «ՀՄՄ»-ը սկիզբէն միւնչեւ վերջ տիրապետեց մրցումին, թէեւ երբեմն տարբերութիւնը երկու կետ էր միայն: «ՀՄՄ»-ի ամենալաւ նշանակողն էր Ահմատ Իպրահիմը՝ 29 կետ որոնցմէ 7 երեկ կետոց, իսկ «Հիքմէն»-ի ամենալաւ նշանակողն էր ամերիկացի ճարիտ Ֆլյմըրը՝ 32 կետ, 21 ռիպանտ:



Պարբերակ

Լիբանանի Աղջիկներու Ախոյեանութիւն

Ռիատին Յաղթանակով Սկսաւ

Լիբանանի պասթեթպոլի աղջիկներու ախոյեանութեան առաջին հանգրուանին վերջին մրցումին արձանագրուեցաւ հետեւեալ արդիւնքը.

- Թատամնո Չուք - Ռիատի 44-90

Դահուկարչաւ

Չարգացող Երկիրներու Մրցաշարը

Հայաստանի Մարզիկներու Փայլուն Արդիւնքները



Ծաղկածորի մէջ աւարտեցաւ զարգացող երկիրներու դահուկարչաւի-cross country skiing ախոյեանութիւնը մասնակցութեամբ Հայաստանի, Սերպիոյ, Ռումանիոյ, Իրանի, Պելառուսիոյ եւ Լիթուանիոյ: Արձանագրուած են հետեւեալ արդիւնքները.

Ազատ ոճի տղոց 10 քմ մրցումին, Հայաստանի ներկայացուցիչ Սերկէյ Միքայէլեանը գրաւած է առաջին դիրքը, արձանագրելով 32:41 վայրկեան: 2-րդ դիրքը գրաւած է լիթուանացի մարզիկ մը, իսկ 3-րդը՝ Միքայէլ Միքայէլեանը: Նոյն ոճին կիներու 5 քմ մրցումին առաջին դիրքը գրաւած է Կատիա Գալստեանը, Հայաստանէն: Դասական ոճի տղոց 10 քմ մրցումին Հայաստանի ներկայացուցիչ Սերկէյ Միքայէլեանը դարձեալ գրաւած է առաջին դիրքը, 2-րդ դիրքը գրաւած է Միքայէլ Միքայէլեանը, իսկ 3-րդը՝ իրանցի Սեյէտ Մէլը: Նոյն ոճին կիներու 5 քմ մրցումին առաջին դիրքը գրաւած է Կատիա Գալստեանը, Հայաստանէն, 2-րդ դիրքը գրաւած է Աննա Միսիթարեանը, իսկ 3-րդը՝ Մարիամ Միքայէլեանը: Արագավազքի-sprint տղոց մրցումին Լիթուանիոյ ներկայացուցիչ Մոտեսթաս Վալիչիուսը, 2-րդ դիրքը գրաւած է լիթուանացի Լուքաս Եակելունիսը, իսկ 3-րդը՝ պելառուս Ալեքսանտր Վորանաուրը: Հայաստանի հաւաքականը շահած կետերով գրաւեց առաջին դիրքը:

ՄԱՅԱԶԴ

Տիկին Վարդուհի Գալայեան Տեր եւ Տիկին Վահէ եւ Նայիրի Գալայեան եւ գաւակուց Տեր եւ Տիկին Գրաչ եւ Թալին Եագուպեան եւ գաւակուց Օրդ. Անի Գալայեան Տիկին Մայրանուշ Քեշիշեան եւ գաւակուց Տոքթ. Արեգնազ Գարակէօգեան եւ գաւակուց Տեր եւ Տիկին Յովսէփ Գալայեան եւ գաւակուց Տեր եւ Տիկին Տիգրան եւ Եղիաբէք Տեր Սահակեան եւ գաւակուց Տիար Պօղոս Գալայեան եւ համայն Գալայեան, Եագուպեան, Քեշիշեան, Գարակէօգեան, ճղայեան, Գարամանուկեան, Գրտեան եւ Պօյաճեան ընտանիքներ ու ազգականներ կը գումեն իրենց ամուսնոյն, հոր, մեծ հոր, եղբոր, հորեղբոր, մորեղբոր եւ հարազատին՝

ՎԱՐԴԳԵՍ ՄԻՆԱՍ ԳԱԼԱՅՃԵԱՆԻ (ծնեալ Պէլրուք, 1934-ին)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 24 Յունուար 2016-ին, կէսօրէ ետք ժամը 5:00-ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

-Յուզարկւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երեքշաբթի, 26 Յունուար 2016-ին, կէսօրէ ետք ժամը 3:00-ին, Սուրբ Աստուածածին Եկեղեցոյ մէջ, Պուրճ Համուտ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային Գերզմանատունը:

-Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:

-Յաւակցութիւնները պիտի ընդունուին յետ թաղման արարողութեան, հանգուցեալին բնակարանին մէջ՝ Ամանոս:

ՄԱՅԱԶԴ

Տիկին Սոնա Քեպպաճեան Գարատանեան Տեր եւ Տիկին Ալեքսան եւ Սեան Գարատանեան եւ գաւակուց Տեր եւ Տիկին Ծորճ եւ Սօսի Տեմիրճեան եւ գաւակուց Տիկին Մարի Գարատանեան Քեշիշեան եւ դուստրը Թալին Տեր եւ Տիկին Ալեքսան եւ Սիլվա Քեշիշեան եւ գաւակուց Տեր եւ Տիկին Չաւեն եւ Վարդուհի Պիլեմեան եւ գաւակուց Տեր եւ Տիկին Վագգէն եւ Օսան Գալէստերեան եւ գաւակուց Տիկին Նորա Էքմէքեան Սաքքալ Տեր եւ Տիկին Դանիէլ եւ Լիզա Գափլանեան եւ գաւակուց Տեր եւ Տիկին Վահէ եւ Սուատ Չէթեան եւ գաւակուց Տեր եւ Տիկին Մեսրոպ եւ Ճուսի Չէթեան Տեր եւ Տիկին Ճոս եւ Վարդուհի Եիւրքեան Օրիորդ Սոնա Չէթեան Տեր եւ Տիկին Յարութ Քեպպաճեան Տիար Ալեքսի Քեպպաճեան եւ համայն Գարատանեան, Քեշիշեան, Մաճարեան, Քեպպաճեան, Գափլանեան, Էքմէքեան, Տեմիրճեան, Գալէստերեան, Պիլեմեան եւ Սուրբաթեան ընտանիքներ կը գումեն իրենց ամուսնոյն, հոր, եղբոր, մեծ հոր, մորեղբոր եւ հարազատին՝

ՊՕՐՈՍ ԻՍԲԵՆՏԱՐ ԳԱՐԱՏԱՆԵԱՆԻ (ծնեալ 1933-ին Ալեքսանտրէթ)

մահը, որ պատահեցաւ 23 Յունուար 2016-ին Երեւանի մէջ յետ կարճատեւ հիւանդութեան:

Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:

Թաղման կարգը տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 26 Յունուար 2016ին ժամը 14:00ին Մայաթիայի Ս. Աստուածածին Եկեղեցոյ մէջ (Երեւան), ապա հանգուցեալին մարմինը պիտի ամփոփուի Նուպարաշէնի (Սովետաշէն) գերեզմանատունը: Յաւակցութիւնները կ'ընդունուին յետ թաղման կարգին, կէսօրէ ետք ժամը 3:30 - 8:00 «Հալէպ» ՀԲԳԿԻ Նոր սրահին մէջ, Վարդանանց 8 փակուղի, տպագրիչներու փողոց:

Այս տխուր առիթով «Չարթօնք» իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ ողբացեալին ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն, յատկապէս ԸՆԿԵՐ եւ Տիկ. Ալեքսան եւ Սեան Գարատանեանին եւ ԸՆԿԵՐ եւ ԸՆԿԻԻ. Ծորճ եւ Սօսի Տեմիրճեաններուն, ինչպէս նաեւ Տեր եւ Տիկ. Ալեքսան եւ Սիլվա Քեշիշեաններուն:

Վահան Թեքեան Վարժարանի Սանուց Միութեան ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՐԵԿՈՅ

Շաբաթ, 27 Փետրուար 2016

ԳՐԱԴՈՒՄՑ ՕՐ

ԲԱՅԼ-Ի

Հայ Տարեցներու Տան Տիկնանց Օժանդակ Յանձնախումբ

Երեքշաբթի, 3 Մայիս 2016

Դասուելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Հետեալ-բարձր թերթիս մէջ իրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեան տեսակետը: Կամքէ անկախ սպորած վրիպակներու պարագային, կ'ապաւինիք յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան: